ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ*.**

1) ման-ոյա, դեղնագ-ծ, բաց-թյա, ան-թևան
2) վաղ-ոոք, ան-տարելի, օր-ոոց, մեղմ-ոոր
3) թիկն-թոց, տափ-ղակ, վեհ-ոեն, գիշեր-թիկ
4) գիշերուզ-ր, բն-ոոան, միջ-ոե, ան-գուտ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *հ*.**

1) շնոր-ալի, հայ-ոյել, հեղ-եղուկ, խոր-ին
2) նշխար-, անհեթ-եթ, աշխար-, օր-նանք
3) ապաշխար-ել, շնոր-ակալություն, խոր-ել, խոնար-
4) Բեթ-ովեն, խոր-ուրդ, Հով-աննես, արհամար-ել

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *և*.**

1) կեղ-ել, վազ-ազ, թեր-ս, ոգ-որություն
2) օթ-ան, ուղ-ճար, հ-ասպառ, եղ-նուտ
3) բ-եռել, ոսկ-որել, սեթ-եթանք, հետ-որդ
4) կար-որել, եր-ութական, թեթ-ասահ, գեր-արել

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *իա*.**

1) Արփ-ր, Սիր-, խավ-ր, քր-կան
2) իշ-ս, էքսկուրս-, հեք-թ, քրիստոն-
3) ակաց-, ալելու-, բամ-, Անան-
4) միլ-ոդ, մում-, Ամալ-, Եղ-

5 **Ո՞ր տարբերակում բառիմաստի սխալ բացատրություն կա:**

1) **ուղերձ** - գրավոր շնորհավորանք, **կոչնակ** - եկեղեցի հրավիրող զանգ
2) **եռակցել** - եռքով միացնել, **թավագեղմ** - խիտ բուրդ ունեցող
3) **հանգրվան** - հանգստանալու տեղ, **ծխնի** - որոշ ժամանակ ծխի մեջ պահած
4) **դրանիկ** - արքունի պաշտոնյա, **աշխետ** - դեղնակարմիր ձի

6 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա:***

1) Գյուղը կծկվել էր, վախից կուչ եկել:
2) Աղմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարոտ, Աղմկում է որպես խուլ ու հեռավոր մի քամի...
3) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար, Զգալ, որ դու կաս, և լինել հեռու...
4) Միրհավ կար անտառում, թռավ արնակոլոլ, երկու փետուր մնաց փափուկ մամուռների վրա:

7 **Տրված բառերից քանի՞ հոմանշային զույգ է հնարավոր կազմել.**

մեղադրյալ, երկչոտ, կթող, բուրյան, ապակե, բագին, եղնիկ, վեհերոտ, անդրավարտիք, գավաթ, եկեղեցի, տաբատ:

1) չորս
2) մեկ
3) երկու
4) երեք

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կա *հուր* արմատը:**

1) հրաժարվել, հուրհեր, հրացան
2) հրանոթ, հրամանատար, հրեղեն
3) քամահրել, հուրի-փերի, հրետանավոր
4) հրոտ, հրակայուն, հրածին

9 **Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

1) աշխատավարձներ, հովանավորներ, ձկնկուլներ, համերգաշարեր
2) ծաղկանախշեր, ապառաժներ, սաղավարտներ, քարհատներ
3) մկներ, դելֆիններ, աստղեր, թագակիրներ
4) պատուհաններ, պատճեններ, աղախիններ, շեղջակույտեր

10 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:**

1) Օրերս անցնում էին միայնության մեջ, տաղտկալի ու միօրինակ:
2) Սրբազա՛ն, թող այսուհետև ոչ մի արհավիրք չխափանի աղոթքդ և եկեղեցուդ զանգերի ղողանջը:
3) Սակայն հիշելով վերստին լույսիդ բարիքներն անհատ՝ Պարգևված քեզնից համառ թշվառիս, Քո աղերսով քեզ պիտի պաղատեմ…
4) Ազգային գրադարանում մեծարում էին ներկայիս ամենահամբավավոր բանաստեղծներից մեկին:

11 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:**

1) լեռ, անկյուն, գարուն, փրկություն
2) ձմեռ, ձգտում, որմնասյուն, սղոցաձուկ
3) բեռ, թոռ, հանգիստ, նուռ
4) ծունկ, ամառ, մանուկ, շարժում

12 **Բառերից քանի՞սն են ածական.**

հասարակ, հասարակական, հասարակարգ, հասարակություն, հասարակած, հասարակագետ, հասարակածային, հասարակայնացում:

1) երեքը
2) վեցը
3) հինգը
4) չորսը

13 **Ո՞ր նախադասության մեջ թվականի գրության սխալ կա:**

1) Ավանդությունն Անիի եկեղեցիների թիվը հասցնում է հարյուր մեկի:
2) Գրիգոր Լուսավորիչը վաթսունհինգ օր քրիստոնեություն է քարոզում դարձի եկած Տրդատին:
3) Մշո «Ճառընտիրի» մի կեսը կշռում է տասհինգ կիլոգրամ, մյուսը՝ քսանութ կիլոգրամ:
4) Միջնադարի բանաստեղծ Ֆրիկը ապրել է տասներեքերորդ դարի երեսունական թվականներից մինչև տասնչորսերորդ դարի առաջին քառորդը:

14 **Նախադասություններից ո՞րն է թերի:**

1) Եվ քաղցր է լինել քո կամքի գերին:
2) Աշո՛ւն, քեզ ի՞նչ քնքշությամբ,
   Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ:
3) Մեգ է, անձրև է, մշուշ է
   Իմ այգում մերկ:
4) Ո՞վ կվառե ոսկեվառ
   Երազ ու հույս:

15 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Սար ու ձոր կանաչ են հագել, կանաչ է ներկվել աշխարհը:
2) Պատուհանից երևացող սարը՝ ձյունաճերմակ գագաթով, նրա փեշերին փռված անտառը՝ եղևնիների ու թխկիների խիտ շարքերով, ինձ հրաշք թվաց:
3) Նրանցից մեկը գալու էր մեզ հետ, մյուսները ուղին շարունակելու էին ձորով:
4) Նրան՝ որպես գիտակ մասնագետի, գործընկերները բարձր են գնահատում և նրա հետ հաշվի են նստում:

16 **Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

Արևելյան մի ……. ՝ փոշոտ փողոցի ստվերոտ ……. մեկում, ……. շոգին ……. մի ծերուկ դերվիշ:

(1. միջօրե, 2. քաղաք, 3. պառկել, 4. անկյուն)

1) 2, 4, 3, 1
2) 4, 2, 3, 1
3) 4, 2, 1, 3
4) 2, 4, 1, 3

17 **Տրված նախադասություններից որո՞ւմ է ենթական արտահայտված գոյականով:**

1) Կարևորը դպրոցը չէր և ոչ էլ գրատախտակը:
2) Ճաղկի սերմի մեջ է բնության հրաշքների հրաշքը:
3) Իմ ստեղծագործություններում ես իմ հոգին եմ նկարում:
4) Ամենքը սպասում էին կաթողիկոսի խոսքին:

18 **Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Ես չեմ պատմում այն բանաստեղծի մասին, որ երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովն է նետել:

1) Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետած այն բանաստեղծի մասին:
2) Ես չեմ պատմելու երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետող բանաստեղծի մասին:
3) Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետած բանաստեղծի մասին:
4) Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմող բանաստեղծի՝ իրեն ծովը նետելու մասին:

19 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Սիրիուսի բնակիչը, որի երկրում նման տարրերի թիվը հասնում էր երեք հարյուրի, և որն իր ճանապարհորդությունների ընթացքում հայտնաբերել էր ևս երեք հազար ուրիշ տեսակներ, անսովոր զարմանք պատճառեց Սատուրնի փիլիսոփային:

1)


2)


3)


4)


20 **Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Զբոսաշրջիկների աչքերի առջև բացվեց մի հիասքանչ տեսարան զարմանահրաշ ջրվեժը ցած էր գահավիժում ահռելի արագությամբ:
2) Դուք ասում են այնքան էլ շահագրգռված չեք որ աշխատանքներն արագ ավարտվեն:
3) Նրան մնում էր միայն մի ելք դա պայմանագրի վավերացումը հետաձգելն էր:
4) Ինչ էր նրան պատահել մենք երկար ժամանակ չգիտեինք:

21 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Նրանք այլևս չէին ուզում աշխատել օրական 10-15 ժամ, ապրել քաղաքի հետնախորշերում, աներևակայելի կեղտի ու նեղվածքի մեջ:
2. Այդ օրը ամերիկյան Չիկագո քաղաքում բանվորները դուրս չեկան աշխատանքի:
3. 1886թ. մայիսի մեկն էր:
4. Մեկտեղ հավաքված՝ նրանք կապիտալիստներից պահանջեցին ութժամյա աշխատանքային օր, աշխատավարձերի բարձրացում և կենսապայմանների բարելավում:

1) 2, 4, 1, 3
2) 1, 2, 3, 4
3) 4, 1, 2, 3
4) 3, 2, 1, 4

22 **Մովսես Խորենացու «Հայոց պատմության»՝ հայ ժողովրդի անցած ուղուն և ապագային վերաբերող պնդումներից ո՞րն է սխալ:**

1) Ներկայացնում է պատմության մեջ հայ ժողովրդի անթերի և բացառիկ դերը:
2) Ներկայացնում է հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական էջերը:
3) Ձևավորում է ազգային ինքնագիտակցություն և սեր հայրենիքի հանդեպ:
4) Ցույց է տալիս հայ ժողովրդի և նրա մշակույթի զարգացման ուղիները:

23 **Պնդումներից քանի՞սն են ճիշտ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի վերաբերյալ:**

- Զղջական, ապաշխարական բովանդակություն ունեցող գործ է:
- Հնչում է որպես հուզիչ ողբ:
- Նրանում փառաբանված են հայ կրթական, լուսավորական գործի նվիրյալները:
- Արտացոլում է մարդու մեղավորության գիտակցությունը և Աստծու ողորմությամբ մեղքերից ազատվելու բաղձանքը:

1) չորսը
2) մեկը
3) երկուսը
4) երեքը

24 **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսն է ծնվում՝ ձեռքի ափում մի կաթիլ արյուն սեղմած:**

1) Փոքր Միհրը
2) Բաղդասարը
3) Մեծ Միհրը
4) Դավիթը

25	**Տրված հատվածը Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է:**

Չըկա քիզ պես հուքմի-հեքիմ, դուն Ռոստոմի Զալ՝ թաքա՛վուր.
Ասկըդ ասկերումըն գոված՝ հա՛մդ ունիս, գոզալ թաքա՛վուր,
Թե էսանց էլ սուչ ունենամ՝ գլուխըս արա տալ, թաքա՛վուր,
Մըտի՛կ արա քու Ստեղծողին՝ ընհախ տիդ դազաբ մի՛ անի:

1) «Աշխարս մե փանջարա է»
2) «Թամամ աշխար պըտուտ էկա»
3) «Աշխարումս ա ֆս չիմ քաշի»
4) «Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս»

26	**Ո՞ւմ բանակի դեմ է ճակատամարտում Գևորգ Մարզպետունին Մուրացանի համանուն վեպում:**

1) Արտաբանի
2) Նյուսալավուրտի
3) Բեշիրի
4) Հասան խանի

27	**Ո՞ր բանաստեղծությունից է հետևյալ հատվածը:**

…Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով…

1) «Հայ ժողովրդի երգը» (Հ. Շիրազ)
2) «Հայրենիքիս» (Ավ. Իսահակյան)
3) «Իջնում է գիշերն անգութ ու մթին» (Վ. Տերյան)
4) «Հայրենիքիս հետ» (Հ. Թումանյան)

28	**Պնդումներից ո՞րը ճիշտ չէ Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի վերաբերյալ:**

1) Վաղ երիտասարդության տարիներին Վանահայրը սիրել է Իշխանուհուն և մերժվել:
2) Հերոսներից մեկը՝ Աբեղան, մանկուց ապրել է վանքում և ոչինչ չի իմացել դրսի աշխարհի մասին:
3) Իշխանը գալիս է կղզի, որպեսզի քանդի եկեղեցին և հեթանոսական տաճար կառուցի:
4) Դրամայի ավարտին Աբեղան իրեն ծովն է նետում, խառնվում բնության տարերքին:

29	**Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

…Եվ հավատացինք, հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի -
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով
Մեր երկիրը հին դարձրին փոշի…

1) «Անվերնագիր»
2) «Մահվան տեսիլ»
3) «Վահագն»
4) «Հեռացումի խոսքեր»

30 **Ո՞վ է «Քարափների երգը» ժողովածուի հեղինակը:**

1) Հովհաննես Շիրազը
2) Եղիշե Չարենցը
3) Վահան Տերյանը
4) Համո Սահյանը

31 **Ո՞ր ժողովածուն կամ բանաստեղծական շարքը հեղինակներից որի՞նն է:**

ա. «Տաղարան»	1. Վ. Տերյան
բ. «Խղճմտանքի ձայներ»	2. Մ. Մեծարենց
գ. «Ծիածան»	3. Ե. Չարենց
դ. «Երկիր Նաիրի»	4. Գ. Զոհրապ

1) ա-4, բ-2, գ-1, դ-3
2) ա-3, բ-4, գ-2, դ-1
3) ա-1, բ-3, գ-2, դ-4
4) ա-2, բ-1, գ-3, դ-4

32 **Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի
Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք պատճառում,
Բայց Նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն պատճառով,
Որ անչափ շատ են սպասել Նրանց:

1) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
2) «Մարդ էլ կա, մարդ էլ»
3) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
4) «Վարք մեծաց»

33 **Բառերից քանի՞սն են հնաբանություններ.**

ախոռապետ, արժույթ, գզիր, հիմնադրամ, բդեշխ:

34 **Տրվածներից քանիսի՞ բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով.**

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ, ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ, ԱՐԳԻՇՏԻ ԹԱԳԱՎՈՐ, ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ, ԷՐԵԲՈՒՆԻ–ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ:

35 **Բառերից քանի՞սն են *անհոդակապ*.**

աղցան, լուսամուտ, գծագիր, լավատես, գարեհաց, այգեբաց, սողանցք, հորդառատ, վազանց, սակագին:

36 **Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.**

ողջ, ինչ-որ, ոմանք, մի քանի, ոչ մեկը, միմյանց, ամենայն, այնտեղ, նույնքան, մենք:

37 **Տրված նախադասության մեջ քանի՞ անկախ դերբայ կա:**

Նստածները, նկատելով իմ այդօրինակ համարձակ քայլը, սկսեցին ծիծաղել, իսկ Անանան, դիմելով Մարիամին, բոլորի ուշադրությունը իր վրա հրավիրեց:

38 **Տրված հատվածներում քանի՞ որոշիչ կա:**

- Բախտավոր եմ ես, որ այս առավոտ
  Կարող եմ բռնել կածանն այս քարոտ:
- Ասում են՝ հեռու Եփրատն է մի օր
  Օրորել մաքուր իմ հոգու քունը:
- Մաշում է իմ սիրտն անդադար
  Հին երգ մի՝ ծանոթ ու տրտում:

39 **Նշել այն բառերի համարները, որոնցում երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

1. արևմտահայ, 2. կուսակից, 3. ծուլամիտ, 4. չարագույժ, 5. լռակյաց,
6. հաճոյախոս, 7. ջերմամեկուսիչ, 8. մահագուշակ, 9. պաճուճանք:

40 **Նշել այն շարքերի համարները, որոնց դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1) ընդհանուր լեզու գտնել- ընդհանուր հայտարարի գալ
2) համբերության բաժակը լցվել- դանակը ոսկորին հասնել
3) սիրտը կպչել- սիրտը կտրվել
4) ժամավաճառ լինել-ժամանակ սպանել

41 **Տրվածներից որո՞նք են պարզ բայեր (առանց բայական ածանցի).**

1. սառեցնելիս, 2. հագնել, 3. խառնել, 4. թողի, 5. նեղսրտեց, 6. վերածնել, 7. գտավ,
8. ընկած, 9. գոհանանք:

42 **Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:**

Այսօր՝ առավոտյան, գնալու եմ դարձյալ, որպեսզի հիանամ Էրեբունու գունավոր որմնանկարներով. իրենց երանգների բազմազանությամբ ու թարմությամբ այդ արտասովոր պատկերները ինձ հմայել էին առաջին անգամ Հայաստան այցելածս ժամանակ:

1. **հմայել էին** - բաղադրյալ ստորոգյալ, **առաջին անգամ** – ժամանակի պարագա
2. **առավոտյան** – ժամանակի պարագա, **գնալու եմ** – պարզ ստորոգյալ
3. **Էրեբունու** – հատկացուցիչ, **գունավոր** – որոշիչ
4. **որմնանկարներով** – միջոցի անուղղակի խնդիր, **իրենց** – հատկացուցիչ
5. **պատկերները** - ենթակա, **ինձ** – հանգման անուղղակի խնդիր

43 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում առոգանության նշան պիտի դրվի:**

1. Եվ ինչքան պետք է տանջես ինձ այդպես:
2. Ինչքան որ հուր կա իմ սրտում բոլորը քեզ:
3. Ինչքան ցավ եմ տեսել ես նենգ ու դավ եմ տեսել ես:
4. Ինչքան աշխարհը սիրես այնքան այն ցանկալի կլինի:

44 **Նշել թվերը՝ ըստ տողերի ճիշտ հաջորդականության:**

1. Հազար տարվան փորձն ու գործ
2. Հազար մարդ է մընտնում նոր
3. Հին աշխարհքը ամեն օր
4. Ըսկըսվում է ամեն օր

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բառը պետք է ունենա բառիմաստ և ինքնուրույն գործածություն:
2. Հականիշները կարող են լինել նույնարմատ և տարարմատ:
3. Համանուն են այն բառերը, որոնք ունեն նույն իմաստը:
4. Որոշ դարձվածքներ ունեն իրենց հոմանիշ դարձվածքները:
5. Որոշ մակբայներ ունեն իրենց հոմանիշները:
6. ***Ամանոր, նավասարդ, կաղանդ*** բառերը հոմանիշներ են:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Ջրտու-ի (1) այդ գիշերներին լուսինը շող- (2) էր գցում առվի մեջ, ջրվորի պողպատ բահի վրա, արծաթ փայլով պսպղում էին սերկ-իլի (3) տերևները, հովից հասկերը քսվում էին իրար, խ-ում (4): Լուսաբացին հալվում էին աստղերը ձյունի գնդերի պես, շառագունում էր արևելքը, արևի առա-ին (5) շողերը խաղում էին ականակի- (6) ամպերի հետ, ասես մի անտես ձեռք բ-ր (7) շողերով ամպի սպիտակ քուլաների վրա հազարավոր խառնիճաղան- (8) նախշեր էր նկարում, որ մի քիչ հետո ավերի նույն շողերով: Արևի շողերի հետ գոլո-շի (9) էր բարձրանում արտերից, ու գիշերվա խոնավությունն էր ան-անում (10):

1) 1-ք, 2-կ, 3-և, 4-շ, 5-չ, 6-տ, 7-յու, 8-ճ, 9-ր, 10-է
2) 1-ք, 2-ք, 3-և, 4-շշ, 5-ջ, 6-տ, 7-յու, 8-ջ, 9-ր, 10-է
3) 1-կ, 2-ք, 3-եվ, 4-շ, 5-ջ, 6-թ, 7-ույ, 8-չ, 9-ռ, 10-ե
4) 1-կ, 2-կ, 3-եֆ, 4-շշ, 5-չ, 6-ր, 7-ու, 8-ջ, 9-, 10-ե

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում գաղտնավանկ կա.**

1) մրցանակ, նախավկա, դրասանգ, այտոսկր
2) սրախողխող, կրթություն, ակնբախ, ճեպընթաց
3) կորնթարդ, ակնապիշ, հետզհետե, դրվատել
4) զոջալ, գթասիրտ, դուստրեր, կրճատել

48 **Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված.**

1) ՑՉԻԳ-6723
2) ՉԿԳ-853
3) ՄՂԵ-294
4) ՔՅԿԴ-9354

49 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Ասպնջական ընտանիքում միշտ էլ հաճելի է հյուրընկալվելը:
2) Հորեղբայրս հայտնի որսորդ է, սակայն վերջերս խիստ զբաղված լինելու պատճառով արդեն ստեպ-ստեպ է գնում որսի:
3) Կատակերգության երկրորդ տեսիլը ամենահաջողվածն էր և գերեց բոլորին:
4) Ուսուցչուհին դրվատեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած ներհուն աշակերտներին:

50 **Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***հացի մեջ աղ չլինել*** - երախտիքը չգնահատել, ***բերանը փակ*** - գաղտնապահ
2) ***ձեռքերը շփել*** - հաջողությունից ուրախանալ, ***փակուղի մտնել*** - անելանելի դրության մեջ ընկնել
3) ***հաշվի նստել*** -հաշվարկները ստուգել, ***լուսնից ընկած*** - գործից անտեղյակ
4) ***հոգին հանել*** -չարչարել, ***ճակատ առ ճակատ*** -բացահայտ

51 **Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:**

1) մեծարգո - ***մեծ, արգ***՝ արմատներ, ***ո*** ՝ ածանց
2) նախագահ - ***նախ***՝ ածանց, ***գահ***՝ արմատ, ***ա*** ՝հոդակապ
3) նախանձավառ - ***նախանձ, վառ***՝ արմատներ, ***ա*** ՝հոդակապ
4) նախնադար - ***նախ***՝ ածանց, ***դար***՝ արմատ, ***ա*** ՝ հոդակապ

52 **Ո՞ր տարբերակում համանունների բացատրության սխալ կա:**

1) ***հորդ*** - տեղատարափ, ***հորդ*** - քո հոր
2) ***մատյան*** - գիրք, ***մատյան*** (գունդ)- հեծելազոր
3) ***մեկնել*** - մեկնաբանել, ***մեկնել*** - կարկամել
4) ***կողակից*** - ամուսին, ***կողակից*** - կողակ ձկից

53 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

1) Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և թվում է, թե փրկության ուղի չկա, և հանկարծ ցոլում է վիթխարի մի կրակ:
2) Խարխուլ սանդուղքով վար իջավ, մի քանի րոպե անիմաստ քայլեց բակում ու մոտեցավ մառանի դռանը:
3) Ինչպե՞ս եղավ, որ աշխարհը այսպես փոխվեց, ո՞ւր գնացին այն օրերը, երբ սնդուկում զրնգում էր ոսկին:
4) Խառնվել է գլխում հին ու նորը, միտքը սառել է, և էլ երբեք չի իմանա, թե ինչ է բերում վաղվա օրը:

54 **Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են անցյալ կատարյալ ժամանակով:**

1) ելավ, կարդաց, ասացինք, մտնեի
2) փախցրեց, գրեր, հասավ, քանդեց
3) մոտեցար, լռեցրեց, թռավ, իջանք
4) տարավ, գրեց, հայտնեցիր, տեսներ

55 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Լուսինը որդուս օրոցքն է ոսկի, Ու ես եմ կախել աստղերը վրան:
2) Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց,- Ո՞ւր է արդյոք հեռացել, մա՛յր իմ անուշ ու անգին:
3) Դիմեցե՞ք դեպ անհայտ հեռուները, և հեռուները ձեզ անմահությո՞ւն կտան....
4) Եվ իմացե՛ք ուրեմն, որ ոչ մի աշխատանք Տքնաջան չէ այնքան, որքան ոգու հերկը:

56 **Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:**

1) Չնայած սառնամանիքին՝ մրցումները չէին դադարել:
2) Հենց այդ գյուղն է մեր որոնածը:
3) Այնպես էին խառնել ամեն ինչ, սատանան իսկ գլուխ չէր հանի:
4) Հենց գարունը բացվի, կտեղափոխվենք:

57 **Տրված նախադասության մեջ ի՞նչ անդամ է հարակատար դերբայը:**

Վհատ սոսկումի տանջանքով կզգաս,
Որ որոնածդ բնավ չես գտնի:

1) ուղիղ խնդիր
2) ենթակա
3) հանգման խնդիր
4) ստորոգելի

58 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

-Երկու շաբաթ է՝ քույրդ չի զանգահարել, - հուզված ասաց ինձ մայրս, ապա ավելացրեց. - նեղացել է ինձնից:

1) Մայրս հուզված ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել, ապա ավելացրեց, որ նա նեղացել է իրենից:
2) Մայրս հուզված ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել, նեղացել է իրենից:
3) Հուզված մայրս ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել, ապա ավելացրեց, որ նա նեղացել է նրանից:
4) Մայրս ինձ հուզված ասաց ու ավելացրեց, թե երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել. նեղացել է իրենից:

59 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները ու նրանց երկրորդական նախադասության բնույթները:**

1. Այն, ինչ արել եմ մինչև հիմա, նախաբանն է մի մեծ գործի:
2. Նրան շատ էր վշտացրել այդ տարի մեր լեռներում եղած ահեղ երկրաշարժը, որ հուշարձաններ էր կործանել:
3. Մի օր գնացի մեր պետական պատմական թանգարան, որ պրոֆեսոր Լիսիցյանին տեսնեմ:
4. Զորյանի կինը՝ տիկին Սաթենիկը, շատ սիրալիր ինձ ներս հրավիրեց, թեև ինձ չէր ճանաչում:

ա. նպատակի պարագա
բ. ենթակա
գ. զիջման պարագա
դ. որոշիչ

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա

60 **Նախադասության նշված անդամներից ո՞րը *չի* կարող արտահայտվել գործիական հոլովով:**

1) հանգման անուղղակի խնդիրը
2) ձևի պարագան
3) ժամանակի պարագան
4) միջոցի անուղղակի խնդիրը

61 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Քրիստինեն սաստիկ շիկնում էր ամեն անգամ ինձ հանդիպելիս:
2) Լևոնը, տատանվելով ու վախենալով, բայց ներքին վճռականությամբ մոտեցավ Գոգոյին և փաթաթվեց նրան:
3) Միասին գնացել էինք Օշական՝ հայ հանճարի՝ Մեսրոպ Մաշտոցի՝ ուխտատեղի դարձած շիրիմը տեսնելու:
4) Երբ երեխաները դժվարանում էին կարդալ, պարոն Ստեփանն այդ դժվարությունը վերացնելու համար ուներ մի շատ պարզ միջոց՝ փայտի հարվածը:

62 **Նշված հեղինակներից ո՞վ է առաջինը կիրառել հանգը:**

1) Գրիգոր Նարեկացին
2) Մեսրոպ Մաշտոցը
3) Նահապետ Քուչակը
4) Ֆրիկը

63 **Նշվածներից ո՞րը բանաստեղծական ժողովածու *չէ:***

1) Միսաք Մեծարենց, «Ծիածան»
2) Վահան Տերյան, «Շշուկ ու շրշյուն»
3) Դանիել Վարուժան, «Հեթանոս երգեր»
4) Պարույր Սևակ, «Մարդը ափի մեջ»

64 **Հետևյալ գրողներից քանի՞սն են Մեծ եղեռնի զոհ դարձել.**

Հակոբ Պարոնյան, Պետրոս Դուրյան, Գրիգոր Զոհրապ, Միսաք Մեծարենց, Սիամանթո, Դանիել Վարուժան, Շահան Շահնուր, Լևոն Շանթ:

65 **Բառերից քանիսո՞ւմ արմատի հնչյունափոխություն կա.**

ընչազուրկ, մարդկություն, վերստին, ուսուցչանոց, տարեմուտ, ոճրագործ, աստղաբույլ, առօրեական, խորհրդատու, սառցաբեկոր, շահութաբեր:

66 **Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**

փոխաբերություն, հանգավորում, շրջադասություն, համեմատություն, մակդիր:

Լուռ հունցվում է քո մեջ, իբրև մատյան և կյանք,
մի խտացած թախիծ՝ մի կորուսյալ երկիր,
որպես աստծուն պարզված տխուր շարադրանք,
որի վրա արյան հետքն է քո սեպագիր:

67 **Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հականիշ են.**

1. անկայուն, 2. անհողդողդ, 3. աներես, 4. անպաճույճ, 5. անտաղանդ, 6. անթաքույց:

68 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ** ***չկա:***

Ամեն ինչ ինձ համար նոր էր, գրավիչ, մի երազ լիներ ասես. նայում էի մեղմիկ սահող մակույկներին, որ կարապների նման լռելյայն սահում էին այս ու այն կողմ:

1. **նման** –կապ, հետադրություն, **լռելյայն** - ածական
2. **ամեն ինչ** - որոշյալ դերանուն, **համար** - կապ, հետադրություն
3. **մի** – անորոշ դերանուն, **ասես** – բայ, հրամայական եղանակ
4. **նայում էի** - անկատար անցյալ, չեզոք սեռ, **որ** – ստորադասական շաղկապ
5. **մեղմիկ** – ձևի մակբայ, **սահող** - անդեմ բայ, ենթակայական դերբայ

69 **Նշել այն բառերի համարները, որոնք ուղիղ խնդիր են:**

Մինչ Աննան շարված 1. **տերողորմյան** կհանձներ 2. **Դավթին**, ես անմիջապես նրա ձեռքից վերցրի 3. **այն** ու կախեցի Շուշանիկի 4. **վզին**, միաժամանակ միամտաբար 5. **ձեռքով** խառնեցի նրա գեղեցիկ ու երկար 6. **մազերը**:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր** ***Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ*** **տարբերակներից որևէ մեկը:**

1. Ստորոգյալը կարող է կազմված լինել մեկ կամ մեկից ավելի բառերով:
2. Նախադասության պարտադիր հատկանիշներն են հնչերանգը, ամփոփ միտքը, ենթակայի ու ստորոգյալի առկայությունը:
3. Պարզ համառոտ նախադասության մեջ բացի գլխավոր անդամներից ուրիշ որևէ բառ չի կարող լինել:
4. Անենթակա նախադասության կազմում չեն կարող լինել ենթակա և դիմավոր բայ:
5. Նախադասության մեջ ենթական և ստորոգյալը կարող են ունենալ ուղիղ և շրջուն շարադասություն:
6. Չեղչված ենթակայով նախադասությունը միակազմ նախադասություն է: